ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.01.2019
341-01

«Գյումրու ծննդատուն» ՓԲԸ
տնօրեն Էդգար Սուքիասյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Էդգար Սուքիասյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ նեոնատոլոգ Նաիրա Հովհաննիսյանը՝ նշելով, որ 2019թ.-ի հունվարի 14-ին գրավոր դիմել է Ձեզ՝ խնդրելով տրամադրել տեղեկություն իր չվճարված աշխատավարձերի վերաբերյալ: Մինչ օրս դիմողը որեւէ պատասխան չի ստացել «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաեւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներով եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել մեզ տեղեկություն հետեւյալի մասին,

1. Ի՞նչ հիմքով չեն վճարվել բժշկուհի Նաիրա Հովհաննիսյանի 2017թ. նոյեմբերի, 2017թ. դեկտեմբերի եւ 2018թ. ապրիլի աշխատավարձերն ամբողջությամբ, 2018թ.-ի հուլիսի եւ 2018թ. հոկտեմբերի աշխատավարձերի 30%-ը, ինչպես նաեւ 2018թ. դեկտեմբերի աշխատավարձն ամբողջությամբ եւ աշխատանքից ազատվելու հիմքով առաջացած վերջնահաշվարկը:
2. Ե՞րբ եք նախատեսում կատարել վերոհիշյալ վճարումները:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում եւ կարգով:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան